ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

Թեստի կառուցվածքը

«Կենսաբանություն» առարկայի 9-րդ դասարանի պետական ավարտական քննական թեստերում ընդգրկված են առարկայական ծրագրի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ:

Թեստը բաղկացած է 34 առաջադրանքից, որոնք, ըստ առաջադրանքների կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների, բաշխված են հետևյալ համամասնությամբ՝

Աղյուսակ 1

Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Հ/h	**Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի**	Առաջադրանքների քանակն ըստ մասերի	Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների
1.	**ընտրովի պատասխանով**	22	22
2.	**կարճ պատասխանով**	9	9
3.	**ընդարձակ պատասխանով**	3	4
	ընդամենը	**34**	**35**

Աղյուսակ 2

Առաջադրանքների բաշխումն ըստ ծրագրային նյութի բաժինների

Հ/h	**ԹԵՄԱ**	**ՄԻԱՎՈՐԸ**
1.	Բույսեր, բակտերիաներ, սնկեր	3
2.	Կենդանիներ	4
3.	Մարդ	11
4.	Ընդհանուր օրինաչափություններ	17
	Ընդամենը	35

Առաջադրանքների բաշխումն ըստ ստուգվող գործունեության տեսակների

Կենսաբանության թեստի բովանդակության ընտրությունը պայմանավորված է հետևյալ կարողությունների ստուգման անհրաժեշտությամբ.

- կենսաբանական պրոցեսների և երևույթների անվանում,
- կենսաբանական պրոցեսների և երևույթների հաջորդականության իմացություն և պարզաբանում,
- կենսաբանական երևույթների և կենսահամակարգերի կառուցվածքի ու ֆունկցիայի միջև պատճառահետևանքային կապերի համապատասխանության որոշում,
- կենսաբանական պրոցեսների և երևույթների վերլուծում,
- կենսաբանական խնդիրներ լուծելու ունակություն,
- տրամաբանական մտածողություն և ստեղծագործական ներուժ:

Քննական առաջադրանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-22-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավորով:
Կենսաբանության թեստի կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (23-31-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:
Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները երեքն են (32-րդ, 33-րդ, 34-րդ): 32-րդ և 33-րդ առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր: 34-րդ առաջադրանքի յուրաքանչյուր ենթահարցի, ենթակետի ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր:

Կենսաբանության թեստի առաջադրանքների նմուշներ

1. Ընտրովի պատասխանով առաջադրանք

Ո՞րն է ընձյուղի ստորգետնյա ձևափոխություն:

1) սոխուկը
2) արմատապտուղը
3) օդային արմատները
4) նեցուկային արմատները

2. Կարճ պատասխանով առաջադրանք.

Քանի՞ ոսկից է բաղկացած մարդու ողնաշարի կրծքային բաժինը:

Պատասխան՝ _____